

ԻՆՔՆՕԳԻՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԿՈՂԼԵՋՆԵՐՈՒՄ

Մ Ս . Բ Է Ն Ք Ս Ի

Ինքնօգնութեան այն միջոցները, որին դիմում են ամերիկացի աղջիկները բարձրագոյն կրթութիւն ստանալու համար, գրեթէ անյայտ են Աւստրալիան ուղկիւնողից այս կողմն ապրողներին, մինչդեռ արժէր առանձին ուշադրութիւն դարձնել դորա վերայ, բանի որ անչափ պարզ են և օրինակելի։ Այդ միջոցներից շատերը մշակուած են դեռևս կողէջներում և ամերիկացի աղջիկները, որոնք իրենց մեծ փառասիրութեան հետ նիւթապէս ապահով չեն, հէնց որ առիթը ներկայանում է, իսկոյն օգուտ են բաղում նրանից։ Երբեմն ինքնօգնութեան նորանոր գաղափարները ծնունդ էին առնում իրենց ուսանողների շրջանում և հետեանքը այն էր լինում, որ շատ աղջիկներ, որոնք նիւթականի պակասութեան պատճառով պիտի զուրկ մնային բարձրագոյն գիտութիւնից, միջոց էին ստանում աւարտելու դպրանոցները կամ կոլլեջները ու այդպէս կեանք էին մտնում—միանգամայն պարաստուած իրենց ընտրած ասպարէզի համար։ Ամերիկացի աշակերտներին շատ լաւ յայտնի է, որ հանգուցեալ Հարֆիլդ նախագահը իւր կրթութիւնը լրացնելու միջոցներ ձեռք բերելու համար Զորի էր քշում—իսկ ամերիկացի աշակերտուհիները գոհութեամբ կարող են յիշել այն փաստը, որ երբ Միացեալ Նահանգների ապագայ նախագահը այդ օրինակ ծանր աշխատանքով դիմում էր իւր ձգտումների նպատակակէտին, ապագայ տիկին Հարֆիլդը, երկրի մի այլ անկիւնում, կողէջում, անտեսական աշխատանք-

ներ էր կատարում, որպէս զի միոց ստանայ կրթութիւնը շարունակելու:

Ոչ որ չի կարող վիճել, որ կանանց բարձրագոյն կրթութիւնն ստանալը միանգամայն ցանկալի է, սակայն այդ նպատակին հասնելուն յաճախ արգելաօրէթ են լինում զուտ անտեսական հանգամանքներ: Մեծ կամ փոքր քաղաքներում ապրող աղջիկները, ուր հասարակական ուսումնարանները հաւասար չափով մատչելի են ինչպէս տղամարդոց նոյնպէս կանանց, հազիւ են այդ օրինակ արգելաօրէթների հանդէպում: Նոքա կարող են անցնել ստորին և միջնակարգ դպրոցների դասընթացը, լսել համալսարանի դասախօսութիւնները, առանց փող ծախսելու, բացի դասագրքերի ծախքից: Սակայն այդպէս չէ գիւղերում և ագարակներում ապրողների դրութիւնը, որոնց համար աղջիկներին կրթելու խնդիրը ընտանիքին ամենամեծ հոգս պատճառող խնդիրն է:

Հետաքրքիրն այն է, որ արեւելքի ագարակատէրերի աղջիկները փոքր հասակից ականատես են թէ ինչպէս իրենց ծնողները փող են դիզում իրենց կրթութիւնը շարունակել տալու համար: Այն վայրկեանից, հէնց որ նրանք մտնում են գիւղական սկզբնական դպրոցը, լսում են ծնողների խօսակցութիւնը, թէ երբ իրանք կաւարտեն այդ դպրոցը — նրանց կուղարկեն պանսիօն: Այդ հայրերից շատերը երիտասարդական հասկում բարեբաղդ էին համարում իրանց, եթէ իրենց յաջողում էր դպրոցում ամենատարրական գիտելիքները ձեռք բերել, սակայն այժմ մշակելով իրենց դաշտերը և հունձը ժողովելով մեծ գոհունակութեամբ յափշտակում են իրենց որդոց, մանաւանդ աղջիկներին բարձրագոյն կրթութիւն տալու ցնորքներով: Երբեմն դպրոց մտնելու պատրաստութիւնը մի տեսակ պարգևի ձև է ստանում, որ ծնողները տալիս են իրենց դստեր: Երբեմն նրան բաժին են հանում մի կտոր հող, որ նա ինքը պիտի մշակէ, ցանէ և ստացածը ծախէ. այդպիսով ձեռք բերած փողը տարեց տարի ժողովելով մի գումար է կազմում, որով նա մի տարի կարող է ուսանիլ կոլլէջում: Այդ հողէ կտորը կոչւում է «կրթական պարտէզ»: Ագարակատէրերը երբեմն հողի փոխարէն իրենց դստեր նուէր են տալիս «դպրոցական կով» (collegecow). Նա ինքն է կթում իւր դպրոցական կո-

վը, սերը բաշում, իւղ հարում և տանում ծախում—աշխատելով ըստ կարելոյն թանգ վաճառել: Այս կերպ ստացած փողը կազմում է «կրթական հիմնադրամի» սկիզբը, որը «դպրոցական կովի» ընտանիքի բազմանալովը—աւելի և աւելի է շատանում: Կրթական հիմնադրամը մեծացնելու համար բացի այդ գոյութիւն ունին և այլ միջոցներ, ինչպէս օրինակ «դպրոցական հաւեր», որոնք ածում են «դպրոցական ձուեր» և այլն:

Յաճախ պատահում է, որ բոլոր այս միջոցներն անգամ անկարող են լինում «դպրոցական հիմնադրամի» այնքան մեծացնել, որ կարողանայ ծածկել կրթութեան հարկաւոր ծախքը: Հունձի պակասութիւնը և կամ անասունների մի հիւանդութիւն կարող են արգելել հօրը մեծացնելու ֆոնդը հարկաւոր չափով: Ահա այդ օրինակ դէպքերում անձնավստահ աղջիկներն օգուտ են բաղում կրթութիւն վաստակելու այն միջոցներից, որ նրանց առաջարկւում է կոլլէջներում:

Այդ միջոցներից ամենաընդունուածը, որ երկար տարիներից հետէ գործադրւում է Արևելեան Ամերիկայում, այն է, որ աղջիկները կօլլէջում կատարում են սպասուհու մի քանի պարտաւորութիւններ և դրա փոխարէն ազատւում են ուսման վարձի մի մասը հատուցանելուց: Այդ միջոցը այն աստիճան յաջողութեամբ գործադրւում է Ամերիկական կօլլէջներից շատերում, որ համարւում է Ամերիկացի աղջիկների ինքնօգնութեան ամենագլխաւոր միջոցներից մեկը և որովհետեւ ես էլ իմ ուսանողութեան ժամանակ օգտուել եմ նոյն միջոցից, ուստի սեփական փորձի հիման վրայ կարող եմ համարձակ խօսել ի նպաստ նորա:

Արևելեան Ամերիկայի ագարակատէրերի աղջիկների մեծագոյն մասի նման, ես մեծանում էի յոյս ունենալով, որ տեղական գիւղական դպրոցն աւարտելուց յետոյ, կ'աջողուի մտնել մի բարձրագոյն ուսումնարան և շարունակել ուսումս: Սակայն աշակերտութեանս վերջին տարուայ ձմեռը շրջակայ ագարակատէրերը մեծ անյաջողութեան հանդիպեցան. դաշտերում լոյս ընկաւ մի տեսակ բզեզ, որ բոլոր հունձը փրչացրեց: Ես իսկոյն գլխի ընկայ, որ վատ հունձի հետեւանքը այն կլինի, որ ես հնար չեմ ունենայ դպրանոց մտնել:

ուստի սկսեցի ջանքով ուսումնասիրել գիւղատնտեսական լը-
րագիրները, յուսալով մի նորագոյն միջոց գտնել պոստի
այդ բնագիտական հետ հոգեւորական համար Եւրոպայի կերպ ժողոված բո-
լոր տեղեկութիւններս իսկոյն հաղորդում էի բանուորներին
և խնդրում անպատճառ փորձել ամեն մի միջոց: Սակայն, չը
նայելով մեր միացեալ ջանքերին բոլորով դաշտերում ազատու-
թեամբ տեսնում էր իւր գործը և մեր պատուական ցորե-
նը ոչնչացաւ: Երբ ինձ յայտնեցին, որ ո՛չ միայն այդ, այլ
և հետեւեալ տարին ես պիտի հրաժարուեմ իմ փայփայած
ցնորքներից—բարձրագոյն դպրոց մտնել, որովհետև ֆոնդի
երրորդ մասը դեռ ևս պակասում էր, ես տեսայ որ ազա-
րակում ապրելը բոլորովին միտք չունի և գրեթէ յուսահա-
տուել էի: Բայց այդ ժամանակ փոստը ստացուեց և ինձ
համար ծագեց յուսոյ մի ճառագայթ: Փոստը ի միջի այլոց
բերեց կանանց մի կոլլեջի կանոնադրութիւն, որի մէջ ես
կարդացի հետեւեալ յօդուածը.

«Ուսանողուհիք դպրոցի տնտեսական մասում կարող
են աշխատանք յանձն առնել, օրական մի ժամ աշխատու-
թեան փոխարէն նրանց տարեկան ուսման վարձը 25 դո-
լարով կը պակսի: Ով ցանկութիւն ունի այդ ձևով իւր ուս-
ման վարձը զեղջել, պիտի օր առաջ յայտնէ նախագահու-
հուն, թէ օրական որքան ժամ—է ցանկանում տնտեսական
աշխատութիւններին նուիրել, որպէս զի կառավարչուհին գի-
տեսայ թէ քանի ցանկացող կայ, որ ըստ այնմ էլ կարողա-
նայ սպասաւորներ վարձել առաջիկայ տարուայ համար:

Ես իսկոյն հաշուեցի, որ այդ կերպ օրական 4 ժամ
աշխատելով ես տարեկան կանտեսեմ 100 դոլլար, իսկ չորս
տարուայ ընթացքում 400 դոլլարի պատկառելի գումարը:
Աւելորդ էլ է ասել, որ ես իսկոյն պինդ բռնեցի առաջար-
կած միջոցից, որ կարծես բաղդն ինքն էր ուղարկել ինձ:
Ապագայում այդ միջոցն այն առտիճան բարեկեցիկ եղաւ
ինձ համար, որ ես յաճախ մտածում էի, թէ մեր դաշտե-
րի բոլոր ինձ բաղդաւորութիւն բերեց. իմ տնտեսական աշ-
խատութեան նկարագիրը կոլլեջում գաղափար կարող է տալ
այն կարգ ու կանոնի մասին, որ տիրում է Միացեալ Նա-
հանգների մի քանի տասնեակ՝ կանանց կոլլեջների մէջ:

Տեսային աղտոտ աշխատութիւնները, օրինակ՝ խոհանոցի

ամաններ լուանալը, հանդերձեղէնների մաքրելը, կերակուր պատրաստելը և այլն բոլորը կատարուում էր խոհանոցում վարձկան ծառաների ձեռքով, և այնտեղ ուսանողուհիք չէին ընդունուում Բայց սեղանառան բոլոր աշխատութիւնները ուսանողուհիների ձեռքն էր. նրանք պարտաւոր էին փոշին մաքրել, սեղան պատրաստել և վեր քաղել, ամանները լուանալ, արծաթեղէնները մաքրել և այլն: Երեք չորս ուսանողուհիք օգնում էին բուսեղէն կերակուրներ պատրաստելուն և մի քանիսին իրաւունք էին տալիս փորձել իրենց դժերը խոհարարական արուեստի մէջ. հիւրասենեակի, երաժշտութեան դասարանների և եկեղեցու մաքրելը նոյնպէս յանձնուում էր նոցա, թէ և յատակը մաքրում էին իսկական աղաթիւնները: Ուսանողուհիք նոյնպէս բաց էին անում մուտքի դուռը և այդ հաշուում էր օրական երկու ժամուայ աշխատութիւն: Ուսանողուհիներից մէկը ժամանակի մի մասը նուիրում էր սպիտակեղէնների կարկաստելուն և հարթելուն: Աշխատութեան ժամանակ մենք երբեք չէինք հանդիպում իսկական ծառաներին: Այդպիսով անպիսն աշխատութեան մեծագոյն մասը, առանց որևէ դժուարութեան, կատարում էին 25 կամ 30 ուսանողուհիք: Ամեն ինչ անուում էր հետևողաբար, կանոնաւոր կերպով և զուարճութեամբ. միակ անյարմարութիւնն այն էր, որ ամեն մի օր 3—4 ժամ այդ օրինակ զբաղմունք ունեցողներին բնականաբար քիչ ժամանակ էր մնում հանգստութեան համար: Դրանից զատ ուրիշ ոչինչ զանազանութիւն չկար սեպհական աշխատանքի գնով իրենց ուսման ծախքի պակասորդը լրացնող աշակերտուհիների և ունեւոր ծնողների աղջիկների մէջ: Սակայն այս ասելով ես ի նկատի ունեմ նրանց դրութիւնը ուսումնարանում, իսկ ինչ վերաբերում է ուսման մէջ արած յառաջագիմութեանը, այդ կողմից մեծ զանազանութիւն կայ: Իրենց ընդունակութեամբ աչքի ընկնող աշակերտուհիք սովորաբար աշխատում էին անտեսութեան մէջ և շատ քիչ էր պատահում այնպիսի քննական գրաւոր աշխատութիւն, որ արժանացած լինէր բարձրագոյն գնահատութեան—100 թուանշանի և որի գրողը չլինէր, ինքը իւր համար ճանապարհ հարթող ուսանողուհի, ինչպէս սովորութիւն ունինք նրանց անուանելու: Նոյնը կարելի էր ասել նուագածութեան

և առհասարակ գեղարուեստի մասին: Ուսումնարանի ամենատաղանդաւոր նուագածուհի մի գիւղական քահանայի դուստրն էր, որ ամեն առաւօտ երկու ժամ շարունակ, սպիտակ գոգնոցը կապած զբաղուած էր Թէյի ամանները լուսնալոյզ և ժողովելով, ճաշից յետոյ նա նստում էր դաշնամուրի առաջ և նրա մասնների տակից պլնպլնի հրաշալի ձայներ էին հնչում, որ մենք միշտ կանգնում էինք դրան առաջ և հիացմամբ լսում նրա նուագածութիւնը:

Գործերի այս օրինակ հանգամանքներն ինկատի ունենալով, պարզ է, որ աշխատանքով զբաղուող աղջկերբը չէին կարող բարձրից նայել իրենց ընկերուհիների վրայ: Ուսանողուհիների Թուում կային փաստաբանների, բժիշկների, քահանաների, վաճառականների, ագարակատէրերի, քրդերի և քաղաքագէտների աղջկերբ: Նրանցից և ոչ մէկը մտքով չէր անցկացնում մի ուրիշին իրանից բարձր կամ ստոր համարելու ի նկատի առնելով ծնողների նիւթական վիճակը, բայց եթէ լինէին իսկ այդ կերպ մտածողներ, ներանք էլ չէին վստահանում արտայայտել այն: Ամենաընդունակ և ամենաշխատասէր ուսանողուհին ամենայարգին էր ուսուցիչների առաջ, իսկ ընկերուհիների շրջանում—նա էր առաւել լաւ ընդունուած, որ ամենալաւ ընկերուհին էր համարուում:

Աղջկերբը անտեսական աշխատութիւնն յանձն էին առնում միմիայն անհրաժեշտութիւնից ստիպուած: Ոչ մի հարուստ ծնողի դուստր հակում չէր ցոյց տալիս ժամանակ անցկացնելու և կամ ուղղակի որպէս զուարճութիւն յանձն առնելու այդ գործը, եթէ անգամ այդպիսի մի ցանկութիւն աքտայտէր, նրան միջոց չէին տալ իրականացնելու այն, որովհետեւ անտեսական գործեր կարող էին յանձն առնել միայն սահմանափակ միջոցների տէր ծնողների աղջիկները, որոնց համար այդ անհրաժեշտ էր: Ուսանողուհիներից շատերը աշխատում էին օրական միայն մի ժամ և այդպիսով վաստակած 25 գոլլարը գործ էին ածում մի որևէ մասնագիտական պարագմունքի համար, որի դասաւանդութիւնը չէր մտնում ընդհանուր ծրագրի մէջ: Մի մասնաղահաս օրիորդ գրաւուելով ընական գիտութիւններով, այդ գրամով ձեռք բերեց իւր սիրած առարկայի վերաբերեալ Թանկագին հրա-

աարակութիւններ: Մի ուրիշը սեղանատանը օրական կէս ժամ աշխատելու փոխարէն իրաւունք էր ստանում մի ժամ վարժուելու գաշնամուրի վրայ:

Տնտեսական մասում ծառայութիւն յանձն առնող աղջիկները սովորաբար մտնում էին այնտեղ ոգևորուած մի ուրեւէ աղջիկ գաղափարով: Ահա, օրինակ, մեր դպրոցում ամենամեծ ժողովրդականութիւն վայելող աղջիկներից մէկի պատմութիւնը: Նրա ծնողները իրենց զրկելով և մեծ խնայողութիւն անելով հազիւ հազ կարողացել էին մի գումար կազմել, որ բաւական էր նրան չորս տարի դպրոցում ուսում շարունակելու համար: Բայց կոլլէջ մտնելուց մի ամիս առաջ նա իմացաւ, որ իւր երկու տարով մեծ եղբայրը Նոյնպէս ձգտում է բարձրագոյն կրթութիւն ստանալու և յուսահատ վիճակի մէջ է, որով և նիւթականի նշանակութեան պատճառով ստիպուած է հրաժարուելու իւր ցնորքներից: Այդ ժամանակ բոլոր առաջարկեց կիսել իւր ուսման համար ժողոված դրամը, վճռելով ձեացած իւր աշխատութեամբ լրացնել այն պայմանով միայն, որ եղբայրն էլ նոյն կերպով «հարթի իւր ճանապարհը» համալսարանում: Երկուսն էլ ճանապարհ ընկան տնից: Եղբայրն իւր ծախքերի մի մասը ծածկում էր քրոջ տուած գումարից, իսկ իւր սնունդը հոգում էր ճաշին և նախաճաշին մի պանդոկում: Սպասաւորելով, իսկ բոլոր իւր ուսման ծախսերի կէսը հոգում էր մասնակցելով կոլլէջի տնտեսական ծառայութեանց:

Կոլլէջում կար մի այլ դեռահաս օրիորդ, որ մեր մէջ իբրեւ «հարս» միակը լինելով, առանձին ուշադրութիւն էր դրուում: Նա ուսանողուհիների մեծ մասից մի քանի տարով մեծ կլինէր և նախ քան կոլլէջ մտնելը ուսուցչուհի էր եղած և այժմ էլ բոլոր դասընթացը չէր անցնում, այլ լսում էր միայն մի քանի աւարկաներ: Իւր ժամանակի մեծագոյն մասը տնտեսութեան նուիրելով—նա իւր վերին աստիճանի սովորներից հնարաւորութիւն ունէր սովորելու: Մեզ թուում էր որ նա ամբողջապէս ապրում է վիպական աշխարհում և մենք միշտ աշխատում էինք նրա հետ խօսք ձգել իւր նշանածի մասին և թէ երբ պիտի պսակուի: Ո՛րչափ մեծ եղաւ մեր զարմանքը, երբ նա մի օր յայտնեց մեզ, որ դպրոցի դասընթացը աւարտելուն պէս մարդու կը

գնայ: Ուրեմն ինչու էր այդքան աշխատում և իւր վաստակած փողերը ծախսում լատիներէն լեզուն և բարոյագիտութիւնը ուսանելու վրայ, քանի որ նա ուսումնաւարտելուն պէս պիտի պսակուէր: Ինչո՞ւ իւր ժամանակը և դրամը չէր գործադրում օժիտ պատրաստելու համար: Երբ ներքան այդ հարցրինք՝ հետեւեալ պատասխանը տուեց. պարոններ, ահա թէ բանն ինչու՞ն է: Ես պսակում եմ մի անձի հետ, որ մտաւորապէս անհամեմատ բարձր է ինձանից: Երբ մենք ծանօթացանք, նա արդէն աւարտել էր համալսարանը, այն ինչ ես անցել էի սովորական բարձրագոյն դրոյքը և գիւղական ուսումնարանի ուսուցչուհի էի, ես վրձուեցի, որ մինչև նրան չհաւասարուիմ, չեմ պսակուի հետը: Նա շատ բան գիտէր, այն ինչ ես նրա համեմատութեամբ կատարեալ տգէտ էի և վախենում էի, չլինի՞ թէ արգելաօրէթ լինիմ նրա յառաջադիմութեան բան օգնական: Ահա թէ ինչո՞ւ առանձնապէս պարապում եմ այն խնդրներով, որ ամենից շատ են հետաքրքրում նրան: Ես չէի կարող հաշտուել այն գաղափարի հետ, որ նա առնում է մի այնպիսի կին, որի վրայ պիտի նայէ ինչպէս մի փոքրիկ սիրելի արարածի վրայ և որ անընդունակ է հասկանալու նրա շահերն և ձգտումները: Այդ պատճառով ես մտայ կոլլէջ, որ պատրաստուիմ նրան իսկական կին լինելու համար:

Ընդհանրապէս, կոլլէջում սովորող գրեթէ բոլոր աղջիկները, ի հարկէ առանց բացառութեան միայն նրանք — որ աշխատում էին անտեսութեան մէջ, ուսանում էին մի որոշ նպատակով: Մեծագոյն մասը ձգտում էր այս կամ այն ասպարիզում որոշ դիրք ձեռք բերել: Հատերը պատրաստում էին ուսուցչուհիներ կամ ուսուցչապետուհիներ լինել այս կամ այն ուսումնարանում, այլը նպատակ ունէին ապագայում իրենց բժշկականութեան նուիրելու կամ գործելու լրագրական ասպարիզում և կամ վարչական որոշ պաշտօններ ստանձնելու: Սակայն մեր «հարսնացուի» որոշած նպատակը ի հարկէ արժանի չէր պակաս յարգանաց, բան մնացած բոլորինը՝ և ապագան ցոյց տուեց, որ «նա կատարելապէս հասաւ իւր որոշած նպատակին: Ես առիթ եմ ունեցել տեսնելու նրան պսակուելուց յետոյ և համոզուեցայ, որ նա դարձել է այն կանանցից մէկը, որոնց ըստ սո-

վորութեան անուանում են Վիշխանութիւն բաղմած գահի վրայ:

Հիւսիսային նահանգներում գոյութիւն ունին վեցի չափ, գուցէ մի փոքր աւելի, կօլլէջներ, ուր գործադրուում է ինքնօգնութեան վերոյիշեալ ձևը: Հարաւային նահանգներում սակաւ է պատահում այդ և ցաւելով պիտի նկատել, որ սակաւ պահանջ է դրան զգացում: Հարաւային նահանգների կանայք անկախութիւն և դիրք ձեռք բերելու ձեռներեցութեան կողմից բաւական յետ են մնացել իրենց հիւսիսային քոյրերից: Այս եղանակը բացառապէս կանանց դպրոցներին չէ վերապահուած. նա յաջողութեամբ գործադրում է նաև Վստինա դպրոցներում: Այդ օրինակ հաստատութիւնների կարգին է պատկանում ՕՏէօի Օբերլին — կոլլէջը, որ ահագին անուն և հռչակ ստացաւ անցեալ պատերազմի ժամանակ նրա ուսուցչապետների և ուսանողների գերութեան դէմ մղած ագիտացիայի պատճառով: Օբերլինում, Լիւսի Ստոնը, որ կանանց ընտրական իրաւանց առաջնակարգ պաշտպաններից մէկն է, շարունակ աշխատում էր անսեսական մասում, որպէս զի միջոց ունենայ բոլոր դասընթացն անցնելու ահագին ժամանակ նուիրելով նաև յունարէն և եբրայերէն լեզուների ուսումնասիրութեան, ցանկանալով Աստուածաշնչի բնագրի մէջ կարդալ այն, ինչ որ ասած է Վկանանց ստոր դրութեան մասին: Ուսման բոլոր ընթացքում նրա շարաթական եկամուտը հասնում էր 50 ցենտի կամ մօտ 5 ֆունտի (մօտ 50 ռուբլի) տարեկան և բոլոր չորս տարուայ ընթացքում նա միայն մի նոր շոր կարեց իւր համար:

Ցնտեսական աշխատութեան մասնակցելու գաղափարը առաջին անգամ գործադրուեց Գօլթօկ կոլլէջում — Մասաչուսեթում 1837 թուին: Այդ կոլլէջի հիմնադիր օրիորդ Մերի Լօցոնը, ի նկատի ունէր չպահասացնել այն աշակերտուհիների ծախքերը, որոնք ցանկութիւն կունենան ի հաշիւ իրենց ուսման վարձի աշխատանք յանձն առնել, այլ բնականաբար և սնունդի ծախքը այնքան բշտցնել, որ կարողանային օգտուել ամենաշքաւոր աղջիկներն անգամ: Այդ նշանակի համար նա վճռեց անային բոլոր աշխատութիւններին մասնակից անել բոլոր ուսանողուհիներին, որպէս զի

այդպիսով ծառաների ծախքը կրճատուի: Ո՛չ մի ուսանողու-
հի, ինչքան և հարուստ ընտանիքից լինէր, ազատ չպիտի
համարուէր աշխատանքից: Այդ ծրագիրը գործադրուեցաւ
և հազարաւոր օրիորդներ, որոնցից շատերը պատկանում
էին Միացեալ Նահանգների ամենաականաւոր տոհմերին—
անցան Գօլթօկ—կոլլէջի դասընթացը, իւրաքանչիւրը կա-
տարելով իւր աշխատութեան մասը: Այդ հիմնարկութեան
կանոնադրութեան մի յօդուածում ասուած է. «Իւրաքան-
չիւր աշակերտուհի օրական մօտ մի ժամ պիտի պարապէ
անտեսական գործերով, սակայն ժամանակի տեղողութիւնը
կարող է մի քիչ փոփոխուել նայելով գործի տեսակին, ա-
ռաւել դժուար և անախորժ աշխատութեան համեմատաբար
առաւել պակաս ժամանակամիջոց է նուիրուում, քան աւելի
թեթեւ և ախորժելի գործի համար: Կիւրակի օրերով աշ-
խատութեան պիտի նուիրել միայն կէս ժամ, այդ պատճա-
ռով անհրաժեշտ էր չորեքշաբթի օրն աշխատանքը կէս ժա-
մով աւելացնել: Ուսանողուհին ամբողջ սեմստրի ընթաց-
քում աշխատում է որոշ նշանակած ժամին—եթէ դրան ար-
գելառիթ չի լինում ուսանելի առարկաների դասաւորու-
թիւնը: Հիւանդութեան դէպքում ուսանողուհու գործը
կատարում է պահեստի ծառան, որ օրավարձ է ստանում»:

Այսպիսի կազմակերպութեան շնորհիւ աշակերտուհու
տարեկան ծախքը պակասում էր 100 դոլլարով, որ վճար-
ւում էր վարձկան ծառաներին: Գպրոցում մի սպասուհի
կայ միայն և մի ծառայ, որոնք կատարում են բոլոր ան-
մաքուր և ծանր գործերը, իսկ ձեռքած բոլոր անային գոր-
ծերը մի ընտանիքում, որ 300—400 անդամ ունի, կա-
տարում են ուսանողուհիք: Սակայն չպիտի մոռանալ, որ բո-
լոր այդ աշխատութիւնները կարելոյն չափ խնայում է
անտեսական յարմարութիւններով, և որ բոլոր բնակարան-
ները տաքացնում են շոգիով:

Այս ուղղութիւնը, որ յայտնի է Գօլթօկի ուղղութիւնն
անունով, 1875 թուին ընդունուեցաւ Վելլեսլեյան կոլլե-
ջում, այն տարբերութեամբ միայն, որ աշխատութիւնը պար-
տագիր չէր այնտեղ բոլոր աշակերտուհիների համար, այլ
ըստ ցանկութեան:

Վէստար—կոլլէջում ուսանողուհիներին առաջարկում

է ինքնօգնութեան մի այլ միջոց. ուսանողուհիք, ըստ ցանկութեան, կարող են յանձն առնել դասարանների օգը մաքրելու հսկողութիւնը, նամակներ բաժանելու աշխատանքը և կամ գրադարանում ու դիւանատանը աշխատել:

Զիկագոյի նոր համալսարանում աղջիկների տրամադրութեան տակ դրուած են ամենաբազմազան միջոցներ իրենց համար ճանապարհ հարթելու: Համալսարանին կից ապրող աղջկերբը չեն մասնակցում անտեսական աշխատութեանց: Սոկայն բազմաթիւ ուսանողուհիք, որոնք ապրում են համալսարանից դուրս, իրանց ապրուստը հայթայթում են առաւօտը և երեկոյ մի քանի ժամ աշխատելով դուրսը ընտանիքներում: Համալսարանին կից գոյութիւն ունի մի գրասենեակ, որի նպատակն է աշխատանք որոնող աշակերտուհիների համար գործ գտնել: Այդ գրասենեակի միջոցով գործ են գտնում մասնաւոր դպրոցներում և գիշերային կուրսերում. այլք ամեն օր աշխատում են Զիկագոյի լրագիրների խմբագրատներում և գրադարաններում: Համալսարանում ապրող շատ ուսանողուհիներ իրանց ապրուստը հայթայթում են այս և այն ուսուցչապետի երեխանց հրահրողութիւն յանձն առնելով: Եւ այդ ժամանակաւոր դասեակները սովորաբար գիտութիւններով են պարագում պարտիզում—ուր զբօսնելու են տանում իրենց մատաղհաս սաներին:

Համալսարանի փոստային բաժանմունքում ամեն օր մի ժամ պարագում են մի քանի դեռահաս օրիորդներ, որոնք ստանում, բաժանում են նամակները և օգնում են պատասխանելով ուսուցչապետներին ուղղած նամակներին, իսկ այդ նամակների թիւը հասնում է 200-ի: Այդ աշխատութեան փոխարէն նրանց ազատում են իրենց ուսման վարձի երկու երրորդականից: Նոյնչափ վարձատրութեամբ ուսանողուհիք աշխատում են գրադարանում գրքերին կնիք զարկելով: Գրադարանում օրական չորս ժամ աշխատելու փոխարէն նրանք ուսումնական տարուայ ընթացքում վաստակում են 300—350 դրլլար:

Ֆակուլտետի անդամների համար սղագրութեան և արտագրութեան մեծ մասը նոյնպէս կատարում են ուսա-

նողուհիք: Մի քանիսը որոշ գումար են վաստակում մասնակցելով երգեցիկ խմբին:

Ամառային երկարատև արձակուրդներին ուսանողուհիք ցրվում են զանազան կողմեր և ընդունում են ամեն տեսակ աշխատություններ: Նրանցից շատերն այդ ժամանակամիջոցում վաստակում են 200, 300, անգամ 500 դրամ, որով նրանք վերագառնում են կոլլեջ: Մյուս ժամանակներս արևելեան Ամերիկայում հրատարակուող մի լրագրում տեղադրված էր անգործ միացած աղջիկների ժողովարանի կողմից մի նամակ, որով նրանք բողոքում են, որ ամառը անհնարին է լինում սպասուհու տեղ գտնել, որովհետև ուսանողուհիների մի ամբողջ բանակ հեղեղում են քաղաքներ և գիւղեր ու յանձն են առնում վարել անտեսական գործը ռեփանսկան հիմունքների վրայ: Շատ շատ դեռահաս օրիորդներ ամենեւին անպատուութիւն չեն համարում կապել գոգնոցը և մասնաւոր տներում աղանձի կամ խոհարարուհու պաշտօն ստանձնել: Աղջիկների ամբողջ խմբեր ամառը պաշտօն են ստանում լողարաններում, ուր նոքա հսկում են սպիտակեղէնի պահպանութեան վրայ կամ տոմսակներ են վաճառում: Չորս տարի առաջ ես ամառը անցկացրի մի հիւրանոցում, որի սեղանատանը սպասաւորում էր արևելքի ամենամեծ համալսարանի մի ուսանողուհի, նա իւր 10 ընկերուհիների շրջանում փող էր վաստակում հետևեալ սեմեստրի իւր ուսման ծախքը հոգալու համար: Յետոյ լսեցի, որ այդ ուսանողուհիներից մէկը չի աւարտել ուսումը, որովհետև ամուսնացել է մի հարուստ դրամատիրոջ հետ, որ նոյն ամառը ապրում էր այդ հիւրանոցում և որին նա սեղանատանը սպասաւորել էր:

Մի քանի ուսանողուհիներ ամառը փոխաբինում են այր պաշտօնեաներին, որոնք արձակուրդ են ստանում: Այդ դէպքում նրանք անշուշտ պիտի իմանան սղագրութիւն, հաշուապահութիւն և լաւ ձեռք պիտի ունենան: Յաճախ ուսանողուհիք պարապում են նաև գրաշարութեամբ, նոքա որ քիչ շատ գրական աղանդ ունին, բաղմամարդ ամառանոցներից թղթակցում են լրագիրներին և այդպիսով բաւական դրամ են վաստակում: Այլք յանձն են առնում գրավաճառական այլ և այլ հաստատութիւնների ժամանակաւոր

գործակալի պաշտօն, բայց այդ գործը համարում է ամենաանախորժ պարապմունքներից մեկը, որը յանձն է առնում կին մարդը վերջին կարիքն ընկած ժամանակ, երբ այլ ևս հնար չէ լինում ուրիշ գործ գտնելու։

Պէտք է իմանաք, որ բացի կարիքից ուրիշ պատճառ չկայ, որ ուսանողուհուն ստիպում է յանձ առնել այդ աշխատութիւնները։ Օտար աղջիկները կարող են ասել, որ «ամիրիկացի աղջիկները այդ անում են հետաքրքրուելով տեսնելու կեանքը և նորանոր տպաւորութիւններ ստանալու համար»։ Սակայն այդ հայեացքը շատ հեռու է ճշմարտութիւնից։ Ամերիկացի աղջիկները առանձին բաւականութիւն չեն ըզգում խոհարարուհու, սպասուհու, ամառային ուսուցչարանների ուսուցչուհու և կամ գործակատարի պաշտօնները ստանձնելիս։ Են դեռ չեմ լսել, որ մի ուսանողուհի զգուշարժութեան համար այդ ձևով անցկացնէ իւր ամառային արձակուրդը։ Նրանցից իւրաքանչիւրը նախամեծար կհամարէր գնալ ծովային լողարանները և ապրել այնտեղ ոչ իւրեւ աղախին, այլ իւրեւ հիւր։ Եւ ուսուցչական տարուայ ընթացքում էլ նախամեծար կհամարէին պարապել միայն գիտութիւններով, եթէ պարտաւորուած չլինէին ուսման վարձի մի մասը սեպհական աշխատանքով հատուցանելու։ Ամերիկացի աղջիկներն այդ բոլորը յանձն են առնում ոչ թէ նրա համար, որ այդ նրանց դուր է գալիս, այլ որովհետեւ ստիպուած են մի կերպ օգնել իրենց, հակառակ դէպքում պիտի հրաժարուէին բարձրագոյն կրթութիւնից։ Ամերիկայի աղջկերանց բնորոշ գծերից մէկն է հանգամանքների հետ հաշուուելու ընդունակութիւնը։ Յուէք նրան ամեն տեսակ յարմարութիւններ և պերճութիւն, որ զուգակից է հարստութեան, ասնը բաղաւոր մանկութիւն, ուր վխտում են բազմաթիւ սպասաւորներ, սիրագործ ծնողներ և եղբայրներ, որ նրան երես են տալիս, գիշերօթիկ դպրոցի թեթեւ կրթութիւն, այնուհետեւ աշխարհային յաջողութիւններ կեանքի մէջ, միջոց առէք նրան ճանապարհորդութիւններ անելու և ամուսնանալ որեւէ անգլիացի լորգի հետ—նա ի հարկէ օգուտ կը բաղի այդ բոլորից և կեանքից կբաղի այն ամենը ինչ որ նա միայն կարող է տալ։ Բայց երեւակայեցէք նրան առանց այդ բոլոր յարմարութիւնների, մինչև իսկ եթէ նա

մի ժամանակ ունեցել է այն և այժմ կորցրել և նա իսկոյն կ'արմարուի նոր պայմաններին և միջոց կգտնի ձեռնարկելու իւր կենցաղը: Ահա թէ ինչ բանի վրայ է հիմնուած ամերիկացի աղջիկների հնարագիտութիւնը, որ չնայելով իրենց նիւթականի պահասութեան, կարողանում են հարթել իրենց ճանապարհը:

Ամերիկայի կոլլէջներում — ինչպէս Անգլիայում — գործադրւում է աւագ աշակերտութիւնների կրթութիւններին սովորեցնելու սովորութիւնը: Սակայն Անգլիայում այդ համարւում է ինքնագնութեան ամենագլխաւոր միջոցներից մէկը, այն ինչ Ամերիկայում դա բազմաթիւ այլ միջոցներից մէկն է համարւում, որ սակայն շատ չի գործադրւում, որովհետեւ դա յարմար է բարձրագոյն դասընթացների ուսանողութիւններին և միանգամայն անպէտքէ կոլլէջ նոր մտնողների համար:

Բոլոր կոլլէջներում և սեմինարներում գոյութիւն ունին նաև մի քանի թոշակներ. բացի այդ ամենաընդունակ և աղքատ ուսանողութիւնը յաճախ օժանդակութիւն են ստանում կոլլէջում այդ նպատակի համար դրուած զանազան գումարներից: Այն ուսողներն են, որ, ընդունուած է՝ ուսանողութիւններին տնտեսական մասում աշխատեցնելու սկզբունքը, թոշակ նշանակելում նախապատուութիւն են տալիս նրանց, որոնք ամենաշատ ժամանակ են նուիրել աշխատանքի: Կոլլէջներից մեծ մասում աշխատութեան համար նշանակուած է ամենաշատ ժամանակը օրական 5 ժամ. հինգ ժամ աշխատող աղջիկները ազատւում են իրենց սընունդի վարձը վճարելու պարտականութիւնից, իսկ թոշակով էլ ծածկում են ուսման վարձը:

Ի հարկէ ինքնագնութեան վերոյիշեալ բոլոր միջոցները չի կարելի այնքան էլ դուրեկան համարել, սակայն որոշ նպատակին հասնելու համար նրանք յանձն են առնում, այն և նոյն իսկ հասնում են, որով անհրաժեշտութիւնը դառնում է մայր հնարագիտութեան:

Թարգմ. Ա. Մպարապետեան

